ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» Հոկտեմբեր 2023 թվականի N: 402-ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N:1657-Ն որոշման և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, Ախուրյան համայնք տեղափոխված ընտանիքներին առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 3873/23 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 1212 «Տարածքային զարգացում» ծրագրի 12030 «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների տրամադրում» միջոցառմամբ Շիրակի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցություն կազմակերպելու նպատակով Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Գաբրիել Ժիրայրի Միքայելյանին /նույնականացման քարտ՝ 003768496, տրված 19.01.2015թ. 008/ հատկացնել 39,200 /երեսունինը հազար երկու հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը և տասնհինգօրյա ժամկետում ֆինանսական միջոցների ծախսը հավաստող հաշվետվության ներկայացումը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է